ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/57»

ք.Վանաձոր

«17» մայիսի 2021թ.

«Վանաձորի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Սամիկոն Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԱԼԼԵՐԻՆԻ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Արման Հարությունյան-ի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1130000 (մեկ միլիոն հարյուր երեսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	«ԲԱԼԼԵՐԻՆԻ» ՍՊԸ
ք.Վանաձոր,Տիգրան Մեծի 22	ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 34/38
Կենտրոնական գանձապետարան	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 06901936	Հ/Հ 16600216956200
Հ/Հ 900232547027	ՀՎՀՀ 06957824
---------- Մ. Ասլանյան	----------Ա.Հարությունյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«17» մայիսի 2021թ. *կնքված*
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/57» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79951110/2	Գնման առարկա է հանդիսանում Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունները: Տե՛ս ներքևում	դրամ	1130000	1	Վանաձոր համայնք	2021 թվականի ընթացքում

**ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

հ/հ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ
1.	Համայնքապետարանի ենթակայության երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցների աշխատանք-ների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում
2.	Համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզների աշխատանքների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում

3.	Համայնքապետարանի ենթակայության գրադարանային համակարգի, թանգարանների աշխատանքների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում
4.	Համայնքապետարանի ենթակայության մշակույթի տների, գեղարվեստական կատարողական համույթների թատրոնների աշխատանքների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում
5.	Պարբերական այցելություններ հիմնարկներ	յուրաքանչյուր ամիս

Պետական, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ

Ուսուցչի օր	5 հոկտեմբերի

Համաքաղաքային միջոցառումներ

Թանգարանային գիշեր	18 մայիսի
Գրադարանավարի օր	7 հոկտեմբերի

Նախադպրոցական համակարգի աշխատանքների բարելավմանը նպաստող միջոցառումներ

Սեմինար-դասընթացներ մանկապարտեզների դաստիարակների համար	Տարվա ընթացքում
Սպորտլանդիա մանկապարտեզների նախադպրոցական տարիքի երեխաների միջև	հունիս

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

հ/հ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ
1.	Թանգարանային գիշեր	մայիսի 18	միջոցառում

2.	Սպորտլանդիա մանկապարտեզների նախադպրոցական տարիքի երեխաների միջև	հունիս	միջոցառում
3.	Սեմինար-դասընթացներ մանկապար - տեզների դաստիարակների համար	տարվա ընթացքում	ծրագիր

4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

հ/հ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ
1.	Ուսուցչի օր	հոկտեմբերի 5	միջոցառում
2.	Գրադարանավարի օր	հոկտեմբերի 7	միջոցառում

ԾՐԱԳԻՐ

«Թանգարանային գիշեր» միջոցառման կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգանբնակչությանը իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ 30-50 վրկ տևողությամբ/:
2. Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանում, Ստեփան Զորյանի տուն-թանգարաներում կազմակերպել ցուցահանդեսները:
3. Ձեռք բերել 100 հատ /7սմx21սմ չափի, 300 գր. ձևավոր թղթից/ հրավիրատոմս, կազմակերպել դրանց բաշխումը:
4. Հրավիրատոմսի արտաքին տեքստը և բովանդակությունը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
5. Ձեռք բերել նկարչական պարագաների 30 հավաքածու /մատիտ՝տուփով, նկարչական տետր / երեխաներին նվիրելու նպատակով:
6. Նախապատրաստել 2 շնորհավորագիր՝ /A 4 չափի, ձևավավոր թղթի վրա տպագրած/ թանգարանների կոլեկտիվներին հանձնելու համար:
7. Ձեռք բերել 2 ծաղկեփունջ /պատրաստված վարդերից, գերբերաներից և կանաչ տերևներից երկարությունը 50-60 սմ., գլխիկի տրամագիծը 7-8 սմ./ շնորհավորագրերի հետ թանգարանների ղեկավարներին հանձնելու համար:
8. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումները:

ԾՐԱԳԻՐ

Մանկապարտեզների նախադպրոցական տարիքի երեխաների միջև անցկացվող սպորտլանդիայի կազմակերպման

1. Լրատվամիջոցների և կայքերի միջոցով քաղաքի բնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառումների մասին/թեմատիկ գովազդային հոլովակ /30-50 վրկ/
2. Համագործակցելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժինների հետ մշակել ծրագիր, առանձնացնել խաղերի տեսակներ և բաժանել ՆՈՒՀ-երի համապատասխան խմբերին:

3. Կազմել գրաֆիկ սպորտլանդիայի անցկացման օրերի վերաբերյալ:
4. Միջոցառումն անցկացնել Ալբերտ Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոցում:
5. Միջոցառումն անցկացնելու համար ձեռք բերել մարզական և խաղային գույք (4 գնդակ, 4 ցատկապարան, 4 բուլավա, 4 օղակ): Սպորտլանդիայի ավարտից հետո գույքը նվիրել հաղթողներին:
6. Եզրափակիչ փուլ դուրս եկած խմբերին և աչքի ընկած առանձին սաների պարգևատրել գավաթներով /3 հատ/, պատվոգրերով /12 հատ/, հուշանվերներով (5 տիկնիկ, 5 մեքենա):
7.Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

ԾՐԱԳԻՐ
Մանկապարտեզների դաստիարակների համար սեմինար-դասընթացների կազմակերպման

1. Հրավիրել համապատասխան մասնագետներ մանկապարտեզների դաստիարակների համար սեմինար-դասընթացներ անցկացնելու նպատակով:
2. Դասընթացներն /3 օր/ անցկացնել համայնքապետարանի դահլիճում և մանկապարտեզներում:
3. Դասընթացների մասին իրազեկել մանկապարտեզների աշխատակիցներին, կազմել գրաֆիկ:
4. Ձեռք բերել համապատասխան գրենական պիտույքներ /տետր,գրիչ, թղթապանակ, նոթատետր 40 կոմպլեկտ/ :
5. Սեմինարների մասնակիցներին հյուրասիրելու համար ձեռք բերել սննդամթերք 10 հատ 1լ բնական հյութ, 30 հատ 0.5լ հանքային ջուր, 5 տուփ սուրճ, 60 հատ բրդուճ վիտչինայով, 60 կտոր թխվածք, 2 տուփ շոկոլադե կոնֆետների հավաքածու, 5 տուփ երկշերտ անձեռոցիկ:
6. Ապահովել 2 սիմինարավարի ներկայություն

ԾՐԱԳԻՐ
«Ուսուցչի օրվան» նվիրված միջոցառումների կազմակերպման

1. Լրատվամիջոցներով քաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնել միջոցառման անցկացման մասին: /գովազդ 30-50վրկ/
2. Կազմակերպել 30 ուսուցիչների և մանկավարժների պարգևատրման արարողություն: Միջոցառման վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համպատասխան բաժնի հետ:
3. Նախապատրաստել 50 անձի համար նախատեսված հյուրասիրություն միջոցառման վայրում: Ձեռք բերել 5 հատ կիսաքաղցր հայկական գինի, 5 հատ 5 տարվա հնեցման կոնյակ, 20 հատ 1 լ բնական հյութ, 50 կտոր թխվածք, 5 տուփ կոնֆետների հավաքածու:
4. Ձեռք բերել ծաղկեշղթա 1 մ բեմահարթակի ձևավորման համար:
5. Ձեռք բերել 30 ծաղկեփունջ / պատրաստված վարդերից, գերբերաներից, շուշաններից և այլ ծաղիկներից/:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:
7. Ձեռք բերել 30 հատ /A4 չափի/ կավճաթղթից պատվոգիր:

ԾՐԱԳԻՐ
«Գրադարանավարի օրվան» նվիրված միջոցառումների կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնել կազմակերպվող համաքաղաքային միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Կազմակերպել գրադարանավարներին պարգևատրելու միջոցառում, վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
3. Նախապատրաստել 20 պատվոգիր /A4 չափի, ձևավոր թղթի վրա/ և 20 ծաղկեփունջ պատրաստված /գերբերաներից գլխիկի չափը 5-6 սմ. և կանաչ տերևներից, / լավագույն գրադարանավարներին պարգևատրելու համար:
4. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր,Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232547027

---------- Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԱԼԼԵՐԻՆԻ» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 34/38
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16600216956200
ՀՎՀՀ 06957824

---------- Ա.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1[illegible]1
«17» մայիսի 2021թ. *կնքված*
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/57» ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-նախահաշիվ

«Թանգարանային գիշեր» միջոցառման կազմակերպում

	Անվանում	*Քանակ*	*Ընդհանուր գումար (հազ. դրամ)*
1	Հրավիրատոմս	100 հատ	*30,0*
2	Շնորհավորագիր	2 հատ	*2,0*
3	Նկարչական պարագաներ	(մատիտ 30 տուփ, ալբոմ 30 հատ)	*58,0*
4	Ծաղկեփունջ	2 հատ	*10,0*
5	Թեմատիկ գովազդային հոլովակ		*100,0*
Ընդամենը			*200,0*

Մանկապարտեզների նախադպրոցական տարիքի երեխաների միջև անցկացվող սպորտլանդիայի կազմակերպում

	Անվանում	*Քանակ*	*Ընդհանուր գումար (հազ. դրամ)*
1	Պատվոգիր	12 հատ	*12,0*
2	Գնդակ	4 հատ	*8,0*
3	Օղակ	4 հատ	*4,0*
4	Ցատկապարան	4 հատ	*1,0*
5	Բուլավա	4 հատ	*16,0*
6	Գավաթ	3 հատ	*15,0*
7	Տիկնիկ	5 հատ	*22,0*
8	Խաղալիք ավտոմեքենա	5 հատ	*22,0*
9	Թեմատիկ գովազդային հոլովակ		*100,0*
Ընդամենը			*200,0*

Մանկապարտեզների դաստիարակների համար սեմինար-դասընթացների կազմակերպում

	Անվանում	*Քանակ*	*Ընդհանուր գումար (հազ. դրամ)*
1	Տետր	40 հատ	*12,0*
2	գրիչ	40 հատ	*4,0*
3	թղթապանակներ	40 հատ	*16,0*
4	նոթատետր	40 հատ	*14,0*
5	հյուրասիրություն (3 օր)		
	Հանքային ջուր 0.5լ.	30 հատ	*6,0*
	Բնական հյութ 1լ.	10 հատ	*9,0*
	Թխվածք	60 կտոր	*18,0*
	Սուրճ	5 տուփ	*2,0*
	Բրդուճ վիտչինայով	60 հատ	*12,0*
	Շոկոլադե կոնֆետների հավաքածու	2 տուփ	*5,5*
	Անձեռոցիկ	5 տուփ	*1,5*
6.	Սեմինարավար	2 հոգի	*80,0*
Ընդամենը			*180,0*

«Ուսուցչի օրվան» նվիրված միջոցառումների կազմակերպում

	Անվանում	*Քանակ*	*Ընդհանուր գումար (հազ. դրամ)*
1	Ծաղկեփունջ	30 հատ	*120,0*

2	Պատվոգրեր կամ շնորհավորագրեր	30 հատ	*30,0*
3	Ծաղկեշղթա	1 մ	*10,0*
4	Հյուրասիրություն 50 անձի համար		*90,0*
	Կոնյակ	5 հատ	*27,5*
	Գինի	5 հատ	*15,0*
	Հյութ	20 հատ	*18,0*
	Թխվածք	50 կտոր	*15,0*
	Կոնֆետների հավաքածու	5 տուփ	*14,5*
6	Թեմատիկ գովազդային հոլովակ		*100,0*
Ընդամենը			*350,0*

«Գրադարանավարի օրվան» նվիրված միջոցառումների կազմակերպում

	Անվանում	*Քանակ*	*Ընդհանուր գումար (հազ. դրամ)*
1	Պատվոգիր	20 հատ	*20,0*
2	Ծաղկեփունջ	20 հատ	*80,0*
3	Թեմատիկ գովազդային հոլովակ		*100,0*
Ընդամենը			*200,0*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր,Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232547027

---------- Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԱԼԼԵՐԻՆԻ» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 34/38
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16600216956200
ՀՎՀՀ 06957824

----------Ա.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«17» մայիսի 2021թ կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/57» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951110/2	«մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ»					200000	580000	580000	580000	580000	1130000	1130000	1130000	**1130000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի հիմնայնքապետարան
ք.Վանաձոր,Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232547027

---------- Ս. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԲԱԼԼԵՐԻՆԻ» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 34/38
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16600216956200
ՀՎՀՀ 06957824

----------Ա.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«_____» մայիսի 2021թ *կնքված*
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/57» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«_____» մայիսի 2021թ *կնքված*
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/57» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն